## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 հունվարի 2014թ. թիվ 1-Ա

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻՆ ԿԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի պահանջների, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.18 կետի «ա» ենթակետով՝

Որոշում եմ.

1. Ստեղծել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններին և Վանաձորի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ծառայությունների տարածքային բաժնին կից սոցիալական աջակցության խորհուրդներ և հաստատել նրանց անհատական կազմերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2012թ. դեկտեմբերի 24-ի թիվ 280-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. հունվարի 8
ք.Վանաձոր